ՆՈՐԱՅՐ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ, Հայ պատմագիտությունը XIX դարում և XX դարասկզբին, *Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, 543 էջ:*


ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆՈՐԱՅՐ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

ՀԱՅ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ
XIX ԴԱՐՈՒՄ ԵՎ XX
ԴԱՐԱՍԿԶԲԻՆ

ԵՐԵՎԱՆ
ՀՀԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2013

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը լույս է ընծայել պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր Նորայր Սարուխանյանի «Հայ պատմագիտությունը XIX դարում և XX դարասկզբին» գիրքը: Գրքում հասարակական-քաղաքական կյանքի կացության հենքի վրա լուսաբանվում են հայ նոր պատմագիտության սկզբնավորման նախադրյալները, պատմագիտության հետագա ընթացքը և զարգացումը: Հանրագումարի են բերված XIX դարի և XX դարասկզբի պատմագիտության նվաճումները, վերլուծված են տարբեր հայացքներ դավանող հասարակական-քաղաքական երևելի գործիչների, պատմագիտության երախտավորների գիտական հայեցակետերը, շրջադարձային երևույթների և համազգային նշանակության հիմնախնդիրների քննությունը պատմագրության մեջ: Գիտական պատմափիլիսոփայության դիրքերից գրքի հեղինակը հաստատուն այն համոզմունքն ունի, որ յուրաքանչյուր ժողովրդի պատմություն իմաստավորվում է նրա պատմագրության մեջ և պատմագրության շնորհիվ, քանի որ վերջիններս մի անընդմեջ հոսքի մեջ են դնում միմյանցից անջատ թվացող պատմաշրջանները, տեսանելի դարձնում պատճառա-հետևանքային կապը, դասակարգում անհրաժեշտության և պատահականության բոլոր անօրինաչափությունները: Մենագրության հեղինակը փաստերի և մտքերի համակցված տրամաբանությամբ ակնբախ է դարձնում, որ XIX և XX դդ. առաջին քսանամյակում հայ պատմագիտությունն աննախընթաց առաջընթաց ապրեց: Ինչո՞ւ հարցին մենագրության հեղինակը տալիս է հիմնարար պատասխան: Այն է՝ Եվրոպայում և Ռուսաստանում բուրժուական պատմագիտական մտքի զարգացումը, Ռուսական կայսրությանը միացման հետևանքով Արևելյան Հայաստանում տնտեսական, հասարակական կյանքի դրական տեղաշարժերը, Ռուսաստանում դեմոկրատական բարեփոխմանը միտված 1850-1860-ական թվականների մտավոր հեղաբեկումները և, վերջապես, բուրժուական հարաբերությունների մուտքը հայ իրականություն զգալիորեն նպաստեցին անցյալում գերիշխող կղերաֆեոդալական մտածողության և իդեալիստական պատմահայեցողության կաշկանդող դրույթների վերանայմանն ու հաղթահարմանը: Եթե Միքայել Չամչյանի մինչ այդ տիրապետող պատմահայեցողության սկզբունքներն արդարացնում էին հին ու միջնադարյան Հայաստանի արտադրահարաբերությունների ամբողջական համալիրը, փառաբանում թագավորների, կաթողիկոսների, զորավարների, այլևայլ երևելի դեմքերի գործունեությունը, ապա հայոց նոր պատմության մեջ Խաչատուր Աբովյանն առաջինն ըմբոստացավ պատմությունը նշանավոր մարդկանց գործունեության գովազդ ներկայացնող միջնադարյան պատմագրության սահմանափակության դեմ և առաջադրեց գիտական պատմություն ստեղծելու պահանջը, որտեղ հասարակական կենսագործունեության ապահովման գլխավոր դերակատարը պետք է լինի

ժողովուրդը: Սարուխանյանի մենագրության մեջ ցույց է տրվում, որ Խ. Աբովյանը փորձեց Հայաստանի պատմությունը կտրել նախախնամության կամքից և բացատրել ներքին և արտաքին տնտեսական և քաղաքական գործոններով:

Պատմական գործընթացների ընկալման աբովյանական ուղեգիծը շարունակեց և որակական նոր մակարդակի հասցրեց Մ. Նալբանդյանը: Խ. Աբովյանը և Մ. Նալբանդյանն աներկբա այն կարծիքն ունեին արդեն, որ պատմությունն է ստեղծում թագավորներին ու զորավարներին, իսկ վերջիններս էլ՝ պատմությունը. համոզմունք, որ նրանք հիմնավորում էին հայոց և համաշխարհային պատմության օրինակներով: Ըստ Նալբանդյանի՝ նույնիսկ պետականության առկայության պայմաններում խոհեմ միապետներն անգամ չփոխեցին հայ ժողովրդի պատմական զարգացման ուղղությունը, այլ սոսկ « անվթար» ընթացք հաղորդեցին այդ զարգացմանը:

Ն. Սարուխանյանի գրքում ցույց է տրվում, որ Խ. Աբովյանից և Մ. Նալբանդյանից հետո իրատեսական հայացքը պատմական անցյալի գնահատման հարցերում դանդաղ, բայց հաստատուն ճանապարհ էր հարթում: Այդ գործընթացին, ըստ հեղինակի, ակամա նպաստում էին պատմագիտության օժանդակ գիտաճյուղերի՝ մատենագիտության, աղբյուրագիտության, հնագիտության, ազգագրության, դրամագիտության ձեռքբերումները:

Հայ հին և միջնադարյան պատմագրության քննական ուսումնասիրությունը, պատմիչների ստեղծագործությունների բազմաթիվ հրատարակություններն ինչպես հայ, այնպես էլ ռուս և եվրոպական լեզուներով անանց նշանակություն ունեցան հետագա զարգացման ճանապարհին: Աստիճանաբար ասպարեզ իջան դարաշրջանի առաջադիմական գաղափարներով տոգորված և մասնագիտական կրթություն ստացած հետազոտողներ, որոնք ջանացին բուրժուական պատմագիտության դրական հայեցակետով լուսաբանել Հայաստանի պատմության հիմնախնդիրները:

Գրքում ցույց է տրվում, որ XIX դ. 60-ական թվականներից ազգային-պահ-պանողական և ազգային-ազատական միտքը գրեթե գերիշխող դարձավ հայ իրականության մեջ և զգալի առաջընթաց ապրեց հայոց պատմության կրոնաաստվածաբանական մեկնությունները բացասելու գործում: Նույնիսկ հին մեթոդաբանությամբ և գաղափարաբանությամբ ստեղծագործողներից ոմանք հարկադրված էին բուրժուական գաղափարախոսության ներգործությամբ վերանայել իրենց նախկին մեկնաբանությունները: Սակայն ընդհանուր առմամբ բուրժուական հայ պատմագիտական միտքը XIX դ. 60-70-ական թվականներին տակավին շատ ավելի պահպանողական ուղղվածություն ուներ և ավանդույթի փոխկանչով արձագանքում էր հին պատմագրությանը: Պատահական չէ, որ այդ պատմագրության շատ ներկայացուցիչներ էին զբաղվում հայոց հին և միջնադար-յան պատմաշրջանների ուսումնասիրությամբ՝ գերազանցապես կարևորելով պետականության գոյության դարերը և Հայ առաքելական եկեղեցու պատմությունը: Հայ բուրժուական պատմագիտության պահպանողական թևը դրանով ջանում էր ազգային ինքնագիտակցության եկող ժողովրդի մեջ հետաքրքրություն սերմանել անցյալի արժանահիշատակ պատմական իրողու-թյունների հանդեպ և ազգի մեջ բորբոքել հայրենասիրական ոգի: XIX դ. 80-90-ական թվականներին իր դիրքերն զգալիորեն ամրապնդեց ազատական-բուրժուական պատմագիտությունը:

Ընդառաջ գնալով ժամանակի թելադրանքին, վերընթաց ապրող հայ ազատագրական մտքի ու շարժման կողմնորոշային որոշումներին՝ ազա-տական-բուրժուական պատմաբաններն սկսեցին քննադատաբար վերա-

բերվել հին հայկական աղբյուրագիտական արժեքներին՝ նորովի վերլուծելով անցյալի երևույթներն ու իրադարձությունները, ազգային-քաղաքական կյանքն ու հարաբերությունները: Այս միտումը շարունակվեց նաև XX դարասկզբին: Արևմտահայության կացության մասին լույս են տեսնում բազմաթիվ աշխատություններ, որոնցից հիշատակության արժանի են Ա. Սարուխանի «Հայկական խնդիրը և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում», Եղիշե Գեղամյանի «Պատմական քաղվածքներ», «Հայերի ազատագրական շարժումները ԺԹ դարում» և այլն: Գյուտ քահանա Աղանյանցը հրատարակեց «Դիվան հայոց պատմության» 13 հատորները, որոնց մեջ ամփոփված էին XVIII-XIX դարերի Հայաստանի պատմության տարաբնույթ հարցերին նվիրված հարուստ վավերագրեր՝ ժողովված Կաթողիկոսական դիվանի, Կ. Պոլսի պատրիարքարանի և մասնավոր արխիվներից:

Հասարակագիտական միտքը հարստանում է նոր հարցադրումներով: Զգտումների, երազանքների ու ոգևորության հայեցողական փուլից կյանքը թևակոխում է էմպիրիկ հարաբերությունների նոր փուլ: Նորեկ փոխ-հարաբերություններին համապատասխան՝ պատմագիտության մեջ ռոմանտիզմը փոխարինվում է ռեալիզմով: Երբ ընթերցողին ներկայացվում են մերձավոր անցյալի շրջադարձային իրադարձությունները, հայ պատմաբանների՝ ինչպես պահպանողական, այնպես էլ ազատական, առաջադիր նպատակն է արթուն պահել սերունդների հիշողությունը, պատմության դասերի խոհուն ընկալմամբ ու յուրացմամբ, անշեղ իրացմամբ նպաստել ազգապահպանմանն ու ազգային համախմբմանը: Ժամանակի հրամայականով ամեն ինչից վեր ազգային այդ դավանանքին (անկախ ազգային-քաղաքական հայացքներից) իրենց ստեղծագործություններում հետամուտ էին հայ պատմագիտության նոր ժամանակաշրջանի գրեթե բոլոր երևելիները՝ Մկրտիչ Էմինն ու Ղևոնդ Ալիշանը, Անտոն Գարագաշյանն ու Քերովբե Պատկանյանը, Կարապետ Եզյանն ու Ստեփան Պալասանյանը, Մաղաքիա Օրմանյանն ու Լեոն, Ալեքսանդր Երիցյանն ու Գրիգոր Խալաթյանցը, Նիկողայոս Ադոնցն ու Ալեքսեյ Ջիվելեգովը: Այս մասին գրքի հեղինակը հանգամանորեն խոսում է «Հայ նոր պատմագիտության երախ-տավորները» խորագրով գիտական ակնարկաշարում:

ՍՏԵՓԱՆՅԱՆ Ս. Ս.
Պատմական գիտությունների դոկտոր